



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

Փետրուար 21, 1955

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Հոգեշնորհ
Տ. Միսոն Վրդ. Կրճիկեան
Նախագահ Միսկան Խորհուրդի
Ս. Համբարձում Եկեղեցւոյն
Պրիմորթ.

Սիրելի

Ստացած ենք Փետրուար 11 թուակիր Ձեր Միսկան տեղեկագրութիւնը, որով կը հաղորդէիք թէ Ձեր նախագահութեամբ տեղի ունեցած է համայնքիդ Միսկան Խորհուրդի անդամոց ընտրութիւնը, եւ ներկայցնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէիք ընտրուած անձանց պաշտօնի վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ ընտրողներու վստահութիւնը կը վայելեն իբրեւ Եկեղեցւոյդ նախանձախնդիր, անձնուէր եւ պարտաճանաչ անդամներ, գրովս կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալիս. —

Տիարք Ծրանոս Ազամեան
Վարդան Սթամբուլեան
Էտուրթ Ճէվահիրճեան
Բաբիամ Մակազեան
Բիչըրտ Կրազեան

Կ'օրհնենք Միսկան Խորհուրդի նորընտիր անդամները եւ վստահ ենք որ անոնք իրենց շնքերը միացնելով Ձեր եւ իրենց պաշտօնակիցներու աշխատանքներուն, պիտի գործեն մեր ժողովուրդի հոգեւոր օգտին, Սուրբ Եկեղեցւոյ պայծառութեան եւ Աստուծոյ փառքին համար:

Մաղթելով կար եւ յաջողութիւն ի ձեռանէ.

Մնամք հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւ.

Աղօթարար

ՄԱՍՐԻԷ ԱՐԹԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի